

Կամ օրինակով տուած է իւր գործէն ալ ամենուն նոյն բան

լալու առեւն տեսնելու է, թէ գնդ տար-
բերութիւնը աւելի զգալի կերպիւ տեղի
կունենայ, կամ թէ ոսկւոյ աւելնալուն չափովը
սպառուելի նիւթերն ալ աւելնալով մի և
նոյն վիճակի մէջ կը մնայ ամեն բան: Եւ ալ
ժամանակին կրնայ գիտցուիլ:

ԳԱՂԱՒԱ: Փարիզ 24 յուլիս:
Նախագահ իշխանը երեկ երեկոյն Փա-
րիզ քաղաքը Սթրասբուրգէն դարձաւ: Նախա-
րարները և Փարիզի արքեպիսկոպոսը դիմա-
ւորելու դադրին, նաև ժողովրդեան մեծագոյն
մասը: Փարիզ գտնուած զօրքը Նախագահ
իշխանին ճամբուն երկու կողմը շարուած էին:

— Կայսերութեան կրկին հաստատութիւնը
համար Վաղդից զանազան գաւառներէն ե-
կած աղերսագիրները կը շարունակեն: Եւ
աղջային կամոյց յայտնուելուն արգելք ե-
ղծները կը պատժուին:

— Լամպէլ Կաթիլիւր (Լանիս և Լ-
նիլ) օրագիրներուն հետ միասնական և կրօ-
նական ուղղութեամբ թիւերով շարունակ
արարացող հետեւեալ առաջարկութիւնը կը
նէ, զոր խնդիրն է Վաղդ բացել և կարկէ
փակել երբ:

Կարգէ՛ք ի կաթիլիւրիս, ինչ որ ամենք ալ
պիտի ջնդուին իսպառ:

Կեցցէ՛ք յիշեալ օրագրոյ քրիստոնէութեան
ծուռ դադարաւոր, կեցցէ՛ք կրօնից աստեակ
աղատութիւնը:

— Սթրասբուրգի անդրադարձեալ գլխա-
ւոր պաշտօններէն մէկը ըլլալով, ամեն տեղ
և ամեն ժամանակ հարկաւոր է անոր ու-
շագրութիւն ընելը: Աստի աստեակ Փա-
րիզի աղքատ բնակիչներուն խրախոյս տալու
համար՝ Սուրբ Կաթիլիւր Վոնապիթը հրա-
մայած է որ տուններին տեղերնին մաքուր
պահպանելու բնակարաններուն հարկաւոր
եղած քանի մը կտոր կահ կարասիք շնորհու-
ի, և աս մասին գործադիրներ նշանակուած
են, որոնք յանկարծ ասոր անոր տունը մտնե-
լով՝ որոնց տունը որ մաքրութեան աւելի ու-
շագրութիւն եղած է՝ անոնց ընծայ և գու-
լութեան վիպական կուտան:

ԱՒԻԴԻՐԱ: Վիեննա 25 յուլիս:

Կայսրը ստորագրութեան նախարարին գիր
մը ընկերով՝ 1848 ի անդադարեան պաշտօնակա-
նէրէն Վարան Փիլիքստորֆը կը ընկէ իր տիտ
ղանձներէն և շքանշաններէն, քաղաքական
յանդանօք ամբաստանուած ըլլալուն համար:
Վարան Փիլիքստորֆը որ 46 տարի Լսագրից
տեղութեան ծառայած է, աս կամայական
վճարէն դէմ կը բողոքէ ու գատաճան կը
խնդրէ, որն որ չընդունուելու ըլլայ, գեր-
գատանքին հետ Լսագրից երկիրներէն հե-
ռանալու մտադիր է:

— Լսագրից կառավարութիւնը Երուսա-
ղէմ հիւպատոսարան մը հաստատելով՝ Իսրա-
յէլացոյ պաշտօնակալութիւն ընելուն համար
աս ազգէն քանի մը պատգամաւորներ կը
պատուին, որոնք ի նշան շնորհակալութեան
Կայսրը գեղեցիկ աման մը ընծայ կը բերեն,
որն որ Սեպեալ ծովէն հանուած քարէ մը
չինքն է:

— Լսագրից մէջ շրջաբերուած գրամա-
թուղթը յունիս ամսոյ վերջը 168:883:981 Ֆր-
օրիկի էր:

— Լսագրից մէջ 208 մանածի գործարան
կայ, ասոնց մէջ 29,153 արհեստագործներ կը
բանին և 6,228 մեքենայք կը գտնուին, յիշ-
եալ գործարաններուն մէջ տարին 40 միլիոն
լիւր (14 միլիոն օխա) բաժնակ կը մանուին:

— Իտալիոյ խռովարարներէն Փիլիքստորֆ ա-
նուն ասպատակը քանի մը ժամանակէ հետեւ
աղքատ անգին խռովութիւն հանելու աշխա-
տելով՝ մեկէն մեկալէն նամակներ կ'աւել-
կուտար: Եւ բանը լուրերով մարդը բռնուելու
ատեն դադարէր զայտնուելու համար քովը
գտնուած թուղթերը կուլ կուտայ: Եւ ալ
լուած ըլլալուն համար՝ անպատուութեան
աղատելու յոսով կը ինքնընդունի կախի. բայց
և այնպէս կուլ տուած թուղթերը ձեռք

անցնելով խռովութեան մասնակից եղող շատ
մարդիկ ձեռք անցեր են:

ՌՈՒՍԱՍՏԱՆ: Վեհափառ կայսրն ու
Կայսերութեան ամսոյն 17 ին Վեհափառ քա-
ղաքը հասան:

— Վեհափառը գրած է ինք թէ Ռուսիոյ վե-
հափառ Կայսրը Վեհափառ Վարդապետութեան
լու առեւն, շուրջապատ զայն վառարի մը պա-
տահեր, բայց բարեբաղդաբար աղատներ էր:
Յիշեալ շուրջապատը վարդա մեքենայագործը՝
տնտեսութեանը համար Վարդապետութեան
լու գաղտնաբերութեան էր, բայց վեհափառ
Կայսրը ողորմելով՝ յիշեալ պատիժը սակաւօր-
եայ բանտարկութեան փոխելու բարեհաճեց:

— Ռուսիոյ մէջ 1850 ին 107 ապստամբա-
րաններ կային երեսօնայից համար, և հիմայ
290 էն աւելի են: յիշեալ ապստամբարան
ներէն 34 ը իրենց շինութիւններէն զատ՝ եր-
կու միլիոն ֆրանք գրամագլուխ ունենին:

— Հռովմայ օրագիրը (Նիւրնպէ Տի Բո-
մա) յուլիսի 10 ին Վաղդից իշխանութեան
1852 տարւոյն հաշիւը կը հրատարակէ: Եւ
էն կերէի որ եկամուտքը 11:110:569 ֆրանք
(275 միլիոն) (Օմանեան դահեկան) և ծախ-
քը 12:906:419 ֆրանք (320 միլիոն) (Օմանե-
ան դահեկան) եղեր է. ուստի ծախքը 1,
795:849 ֆրանք կամ 45 միլիոն զուռուշի չափ
աւելի է: Եւ պակասը եւեմայից նախարարը կը
յուսայ լեցնել մէկ մասը փոխառութեամբ,
մէկ մասն ալ փետրվարի 7 ին վճարուած նոր
հարկերով:

— Վեհափառը գրած է ինք թէ Հռովմ
վախճանեալ յայնի մը մարմինը թաղելոյ Վա-
ղի կողմանէ հրաման չարարելով՝ Վաղթա-
տարուած էր, և ասոր վրայ Յոնիպից շատ
նեղանալով և աս առիթով պապական երկիր-
ներու մէջ քաջած նեղութիւններն յիշելով,
Հռովմայ կառավարութեան հասուցում
խնդրեց էին: Հիմայ կը լսեմք թէ ասանկ հա-
տուցումը Վաղի անխաղաղութեան սկզբանցը
դէմ ըլլալով՝ հաճոյական պատասխան մը չը-
տրուելուն համար՝ Յոնիպից կառավարու-
թիւնն ալ իւր իշխանութեանը տակը գտնու-
ած բոլոր Վաղդից եկեղեցիները դողել
տուեր ու Հռովմէական քահանայից արգելք
է որ եկեղեցական պաշտօն չկատարեն:

ՅՈՒՆԱՍՏԱՆ: Թագաւորը յուլիսի
9 ին Վեհափառ մեկնելով՝ Լսագրից Բարդա-
պետ քաղաքը գտնուած հանքային ջրերը
մտնելու գնաց առողջութիւնը կազդուրելու
համար: Երկրին առժամանակեայ կառավա-
րութիւնը այս անգամ ալ փոխանորդաբար
թագաւորին յանձնուեցաւ:

Եւ այժմ ներքին գործոց և ստորականութեան
տեսուչները պաշտօնէ հրաժարելով՝ տեղեր-
նին Փաղամիտի և Փայքո նախարարները նշա-
նակուեցան:

— Նախկին եկած նամակ մը կը ծանու-
ցանէ թէ Վաղիկայի փոքրիկ նաւախումբ
մը յիշեալ քաղաքի նաւահանգիստը մտեր է
ուսկից Փիլիքստորֆ նաւահանգիստը պիտի երթայ
Վիպեալ Նախագահ կառավարութեան յունայ
տեղութեան ունեցած պահանջմունքը պըն-
դելու համար, ի մասին ամերիկացի քարոզ-
չին որ քանի ամիսէ հետեւ բանտարկուած ըլ-
լալով՝ Վաղիկայի հիւպատոսը չէ կրցեր ա-
ղատելու: Եւ ինչ:

ԱԶԳԱՏԻՆ ԼՈՒՐԵՐ

Եւ քանի մը շաբաթուոյ մէջ Կոստանդնու-
պոլսոյ շատ տեղումները պատահած զանազան
հրկիւղութիւնները՝ Կոստան Լաւաւոյ վերջին
երկու թերթերուն մէջ յիշած ասանկիս յա-
ւալի զիպաւածոց մէջ շաբաթագրիս սովորա-
կան ընթացքին հետեւելով, համառօտ և հա-
րեանցի կերպով մը գրեցինք: Բայց դիւրա-
գայ սիրտերնիս չընկնար այս անգամ ներքեւ
Կոստան Լաւաւոյ, որ Սամաթիոյ հրկիւղ-
ութեան խղճալի հայոց կրած ծանր վնասնե-
րուն վրայ մանրամասն տեղեկութիւնները

տալով ըլլալով՝ չընկնար իւր պարտաւո-
րութիւնը կատարելու, թէ ողորմելի վնասնե-
լոց կարեօք չափ միջնորդութիւն հասցնե-
լով, և թէ բարեպաշտ հայ հասարակութեան
առատաձեռն գթասրտութիւնը գրգռելով:
Նշմարիտ բարեպաշտութիւնը և արժանա-
ւոր բարեգործութիւնը հարկաւոր ժամանա-
կին եղածն է, որն որ թէ կարօտեցող սրտա-
բուղիս երախտագիտութիւնը կը գրաւէ, թէ
Լսուածոց հաճելի և թէ ամեն մարդոց առ-
հասարակ գովութեանը և շնորհակալութեան
արժանի կըլլայ:

Լսանկ բարութիւն մը գործելու ցա-
ւալի առիթը կուտայ բարեսէր հայ հասարա-
կութեան, Սամաթիոյ անցեալ շաբաթուան
ստեղծել կրակը: Եւ արդարեւ մի սիրտը կը
նայ չարժիք, որ աչքը կրնայ արտասուք զըս-
պել, երբոր լսէ, երբոր տեսնայ հաղար այս-
չափ տուններ և խանութներ միմիւր դարձած,
երեք հազար հայ գերդաստանք, տասն հազա-
րէն աւելի համադրի արք, կանայք և երեխայք
(մեծագոյն մասամբ մերկ, բոսկիկ, ևնօթի)
առանց օթեանի մնացած:

Բայց ինչպէս օգնելու է այսչափ խղճա-
կաց, ինչպէս անոնց ապրուստ, հագուստ և
սպաստանարան ճարելու է. ծանր միանգա-
ւայն և ամենաթեթեւ խնդիրներ են ասոնք:
Օտնը են միայն առանձին մարդոց համար,
բայց շատ թեթեւ՝ երբ բոլոր հասարակութիւնը
մեծ և սղոյի, հարուստ և աղքատ, ձեռք
ձեռքի տալով՝ սիրով, միաբանութեամբ, և
միակ նպատակաւ և ուղիղ սրտիւ մեր եղ-
բարոյ օգնութեան շտապելու ըլլայ:

Լսանկ անանկալ գթաբարութեան մը
պատահած առեւն՝ կըստսուէր, որ աղքատ
հոգեւոր գլուխները անձամբ ելնէին զատ զատ
ամեն մէկ գլխաւոր ամիրաններուն երթալին,
հրկիւղեց խղճալի վիճակը նկարագրելով՝ ա-
նոնց ողորմած սիրտը շարժէին... Լսե-
նէին չեմք երկբայի թէ անոնց ամեն մէկը
իրենց անուանը, կարողութեանը և առատա-
ձեռնութեանը վայլած օգնութիւնը կընէին:
Թեպէտ աս կերպով չեղաւ, բայց դեռ կը
յուսամք որ մեր խղճալի համադրեք անօգ-
նական չըման:

Երբէն Վաղիկայի սրբազան Վատրի-
արքին և Լաւալին Գերագոյն ժողովոյ սնորհ-
նութեամբ քսան երեսուն պատուաւոր ան-
ձինքներէ առժամանակեայ ընկերութիւն մը
կազմուեցաւ, (որոնք ինչպէս և կը յու-
սացուէր անոնց բարեպաշտութեան) սիրով
յանձնառու եղան որ ամեն մէկերնին իրենց
վերաբերեալ մարդիկը Սամաթիոյ հրկիւղեց
օգնելոյ բարեպաշտական գործոյն մէջ մասնա-
կից ընելու աշխատին:

Եւ բարեգործ ընկերութեան յարգոյ ան-
գամներէն պարտք կը համարեմք յիշել այս
տեղս Նիշան աղայի Փիլիքստորֆ, Նիկողոս
աղայի Սիսաքեան, Վեհափառ աղայի Խորասան
ճեան, Վոլոս աղայի Կաղաքի, Երուսաթիւն
աղայի Գալամաճեան, Վեհափառ աղայի Վա-
րդապետեան և այլն. որոնց պատկաւելի անու-
նը տղաւորութեամբ ծանօթ է արդէն ա-
մենուն:

Եւ երբէն է ըսել որ ասոնց անխնայ բա-
րեսիրութիւնը պիտի յաջողի առաջադրեալ
նպատակնուն հասնելու, որ է խեղճ հրկիւ-
եայները կարեօք չափ միջնորդութիւն և յուսա-
հատութեան մէջ չթողուլ այնչափ բաղմու-
թիւնը. աւելորդ է նաև ըսել որ անոնց ալ
յաջողութիւնը կատարեալ ըլլալու համար՝
բարեսէր հասարակութեանը ձեռքէն եկած
օգնութիւնը չը ննայել պէտք է: Աստի կը
հրաւիրեմք ամեն հայադիւր որ Լսուածոց
հաճելի և մարդկան առջև գովելի գործէս
ետ չման:

Երբէն ժողովուած գումարովը անմիջա-
պէս պէտք եղածը հոգացուելու սկսան, ա-
րեգակի ջերմութեան ողորմելիները պատու-
պարելու համար՝ վրաններ կանգնուեցան,
տուններ վարձուեցան, բայց դեռ ընեմք շատ
կայ:

Բարեգործ ընկերութիւնը ի հարկէ խղճ-

ճախաց առաջին պիտոյքը հոգալէն ետքը՝ պիտի խնամք տանին աւ հրկիզութեան պատճառաւ իրենց արհեստը բանելու միջոցներէն զրկուած արհեստաւորներուն ալ ձեռքէն բռնել և օգնել որ չի յուսահատին և ընտանեացը ապրուստը ճարելու կարենան։ Այս մասին զանազան ընկերակցութեանց յորդոյդ պիտաւորները և անդամները աւելի ազդու կերպիւ կրնան օգնութեան հասնիլ իրենց գծաբաշխ արհեստակիցներուն, որովհետեւ անոնք միայն կրնան աղէկ ծանօնալ անոնց կրակէն առաջ ու ետքը գտնուած վիճակին։

Այս գործոյս մէջ գլխաւոր ծառայութիւնը ներէն մէկն է մանաւանդ ժողովուած կամ ժողովուելի գրամը գծաբաշխ հրկիզելոց բաժնէն։ Այսին ածին մեկուն ճշմարիտ կայութիւնը անձամբ կատարեալ անաչառութեամբ և անկաղմասիրութեամբ քննելու, իմնաւոր է որ աւելի կարօտեալներուն ձեռքը հասնի հասարակութեան օգնութիւնը. տան պիտոյքը հոգալու մարդ չունեցողներուն՝ գրամի տեղ պաշար տալ, բարի վարք ունեցող արհեստաւորներուն պաշարի տեղ ստակ տալ, գինեմըութեան գերիներուն ստակ չողարժ միայն պաշար տալ, բայց ան ալ ոչ թէ մէկէն ալ որ օրի պէտք եղածին չափ, որովհետեւ շատ եղած ատենը զաւակներուն ուսուցիչը կը տանին քինեռուները կը սպասեն, և այլն։ . . . : Իսկ խնամարարութեամբ թողութիւն կը խնդրուի հրկիզելոց օգնական ընկերութեան յարգող անդամներէն որ իրենց շատ աղէկ քիտոյած աւուրկայներու վրայ առանց արժանաւորութեան խրատ տալու պէս կ'երեւիմք. ասոր պատճառ նախ մեր կարեկցութիւնն է, երկրորդ մեր փափաքը որ յիշեալ յարգող աղաները իրենց եղբայրսիրական աշխատասցը փոխարէն չնորհակալութեան տեղը՝ ապերախ և անսիրտ մարդոյմէ սիրտ կոտորելու զրպարտիչ և անիրաւ խօսքեր չըլտեն, ինչպէս որ սովորաբար կը պնտահի ամեն տեղ ասանկ պարագաներու մէջ։

Խօսքերնիս չեմք ուղեր վերջացնել առանց քանի մը յատուկ շնորհալաց խօսքեր բերելու։ Քափամաճեան աղին հարազատաց համար, որոնք, ինչպէս կը լսեմք, առաջինները եղան, որ ինքնակամ յոժարութեամբ և առանց մեկու մը հրաւիրանոց (չառեղը առանկ պարագայներու մէջ հրաւեր, աղաչանք, գովութիւն կը պահանջեն) խեղճ հրկիզելոց առատաձեռն սուրբերով բարեբարեցին։ Եթէ յիշեալ աղաչանքը աղաներուն բարի օրինակին հետեւելով, անոնց տուածին (քան հազար գահեկանէն աւելի) չափովը՝ անոնց հաւասար կամ աւելի մեծ հարստութիւն ունեցողներն ալ չի խնայեն իրենց օգնութիւնը, կը յուսամք որ խեղճերը բաւական միտքաւուեցան ըսելու կարողանամք. քիչ օրէն։ Թող ներեն մեծապատիւ Քափամաճեան աղաները որ Նոյեան Նոյնուոյ մէջ հրատարակելու փութացին իրենց աս յատուկ բարեբարութիւնը զոր գուցէ իրենց համեստութիւնը մոռացութեան դատապարտած էր. բայց առնել նպատակն ալ մերինն պէս՝ խղճալեաց օգնութեան հասնել ըլլալուն համար՝ յատուկ դիմումը ըրածին յիշեցինք, որ ուրիշներուն ալ բարի օրինակ և խրախուս ըլլայ։

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

— Սեփական կայսրը իւր սովորական առատաձեռնութեամբը գրամոյ մեծ գումարներ շնորհեց ի նպատակ հրկիզելոց մայրաքաղաքին։

— Փոխարքայի բարձր խաչանին փոփոխութեանը առիթով երկուշաբթի օր իբրեւապի հանդէս ըլլալուն համար՝ Բարձրագոյն տեղութեան նախարարները Լըբուհի պալատը դնացին և վեհափառ կայսեր շնորհակալութեան և խոնարհ ակնածութեան հաւաստիքը մատուցին։

— Կայսերական նաւուց երկրորդ խումբը հրամանատարութեամբ Նիկիտ փաշայի իւր մագանի 28 ին Պերութ հասեր է։

— Կայսերական նաւարանը խնամք բարձր պատիւ մեծ ծովագետի ու թառն թնդաւնօթ քաշող պատերազմական պատուակաւոր շոգենաւ մը շինուելու վրայ է։

— Վարդիոյ կայսրը անցեալ ամսոյ մէջ Պերութի գիմացը Սեմին քաղաքը հասած ըլլալով, Սերպիոյ իշխանը յարգանաց գիմաւորութիւն ընելու գնաց։

— Վարդիոյ իշխանի սրբի Նորի իշխանը շաբաթ օր Կոստանդնուպօլս եկաւ։ Կ'ըսեն թէ Սիմիոյ իշխանին Վարդիոյ կայսեր հետ Հերմանթ (ժողովուրդը) Օսմանեան կայսերութեան կողմէն ըրած տեսութեան պատմութիւնը ընելու եկած է Բարձրագոյն գրան։ Վարդիոյ կայսրը յիշեալ այցելութեան ժամանակը Վարդիոյ Զօհրապիւրի Նիփօլի մեծ ժողովուրդը շնորհեց։

— Նոյեալ հինգշաբթի Վարդիոյ գետաւոր թարափիայի ամարանցին պարտէզին մէջ փառաւոր հայկեր յիշ մը ըրաւ Շարլմանիւն և Շարլմալ շոգենաւուց նաւատիրներուն։ Նախագահ իշխանին, գետապանին և Շարլմանիւնի հրամանատարին կենացը գինի խմեցին։ Նաւատիրները զանազան զուարճալի խաղեր հանեցին ի զօրանա հանգիստականաց։

— Շարլմանիւն կիրակի օր մեկնեցաւ մայրաքաղաքէս։

— Նոյոյ 27 ին կիրակի օր պապական հայտ եկեղեցիներուն մէջ Հասունեանը թուղթ մը հրատարակաւ կարգացնել տուերէն, Հասունեայ գահէն եկած է ըսելով։ Այս թուղթին նպատակը պապականաց հատուցնել է թէ Տօն Վասպարօն Հոռով գացեր ու Սիմիոյնի սրբոյն Վազարու ըսուած գիրքը ես գրեցի ըսեր է։ Հին առասպելաց կրկնութիւն։ Իսկ այս Հոռով եկած թուղթը կարգացուելու ատեն շատ նախապառաւորութիւններ, զգուշութիւններ ընել տուեր է Հասունեանը որ չըլլայ թէ այն թուղթը ուրիշ տեսնէ, կամ օրինակը առնէ։ Օրմանալ բան, միևնոյն բանը հրատարակել և գաղտնի պահել կարելի ըլլալը հիմայ կը լսեմք։ Այս նոր խաղութիւն գըրգըր թուղթը ոչ կարգացեր և ոչ լսերէն։ Իսկ երկուշաբթի օր տաճկերէն լեզուէն, հայերէն տառերով և լրբի Քափամաճեանի կողմէն հրատարակուեցաւ թուղթ մը քաղաքի թուղթէն և քանի մը պատուելի բարեկամներէ եկած նամակներէն (զոր կը ցաւիմք որ թագրի մէջ բաւական տեղ չկայ տպելու) կ'իմանամք թէ Հոռովէն եկած թուղթը պահուելուն համար և ըստ սովորութեան օրինակը կամ թարգմանութիւն ժողովուրդեան չըտրուելուն համար, կը կասկածին թէ շինուելու ըլլայ այն թուղթը։ Իսկ մեր ընդ հակառակն կը կարծեմք թէ ստուգիւ Հոռովէն եկած ըլլայ և Հասունեանը եկեղեցիներուն մէջ կարգաւ տուեր է որ Պապին հրամանը տեղը երթայ, և մեջը կարելի է իրեն դաշտելու բան ըլլալուն համար՝ թարգմանութիւնը կամ օրինակը չէ ուզեր տալ, և աս ալ բնական է. բայց չգիտեմք թէ աս բնական է ինչքան կրնայ արժէլ ժողովուրդի մը հոգեւոր գըրգըրին պաշտպանութեան համար։ Ինչպէս ինչ առայժմ Սիմիոյնի քաղաքի շոգ թէ բոլորական կամ Փրօթեմիս եղան) այսինքն այն թուղթը չեմք ընդունել ըսին։

— Պերութ տեղէն Քաղիսն ըլլալու Պալոն աղբատաց աւելի շահաւէտ ըլլալու յուսով մեծարդոյ տնօրէնները առաջիկայ կիրակի օրուան (օգոստոսի 3 ին) ես ձգեցին։

— Իզմիրէն մեր յարգող թղթակիցը յուլիսի 25 ին կը գրէ։

«Նոյա՛մ երեքշաբթի 17 տարեկան տղուն մէկը յոյն երեւելի սեղանաւորի մը գրատունը կերթայ նամակ մը ձեռքը՝ ըսելով, թէ աս նամակը Քափամաճի Նանի սնուն աւաղակապետը խրկած է, որով 5000 զուռուշ կը խնդրէ և թէ պատուիրէր է իրեն որ կամ ինքը առնու տոակն ու տանի կամ պատասխանը բերէ։ Յոյն սեղանաւորը բռնել կուտայ աս տղան որն որ ձանձուած ընտանիքէ մըն է և

Իրօք պահտայի գօլեճիօյն աշակերտ։»

«Նոյա՛մ չորեքշաբթի երկու Նիգիլացի եղբայր և մէկ յոյն վաճառական իրենց ծառայիչներու որսի կ'երթան մինչև Պուշա, յէն 3 կամ 4 ժամ հեռի տեղումնք, ուր մէկէն ի մէկ աւաղակապետ Քափամաճի Նանի գիմային կ'ըլլայ չորս հոգիով և որսորդներուն հրացանները կ'առնէ, լսելով։

«Նոյա՛մ չորեքշաբթի, քանի մը խօսք ու նիմ զրուցելու ձեռք։»

«Որսորդները կը նստին և ատենաբան Վաղակապետը կը կարծի հասկընել անոնց թէ ինքը մեծ նեղութեան մէջ է և գրամի կարօտութիւն ունի, «գուշ օրսորդներ ո' կըսէ» իզմիր հային օխան քառասուն փարայ կուտէք, բայց հոս հարկը փարայ է ու չը գըրնրվի անգամ։ Այսին դատուքը Պուշայէն 2 գահեկանով իզմիր կ'երթար, մէնք միայն քիչ մը ծխախոտի համար քսան կամ երեսուն զուռուշ բերողէք կը հատուցանեմք, և այն և այլն։ Վաղակապետը կը գառնայ Նիգիլացիներուն կըսէ «գուշ վաճառականութեան մէջ շատ դրամ կըրանցուցիք, ուստի ձեզմէ ստակ առնելը կամ խնդրելը մեծ անիրաւուն է» ու գառնալով յոյն վաճառականին կըսէ «բայց դու չեղիս Վ. . . շատ ստակ տէր ես, մանաւանդ հայրդ շատ հարուստ է և անցած ու աս տարի շատ դրամ շահեցար թէ իւրէն և թէ ցորենէն. ու հիմակ ալ պիտի շահիք՝ որովհետեւ ձեռքերնիդ բաւական իւղ ունիք։ Նստուած յաջողէ, ուրեմն պէտք է որ դուն մեղ օգնես, ինչու որ հարկաւորութիւն ունիմք։» — Հատ աղէկ, կըսէ յոյն վաճառականը իրկիմ՝ ձեռք քանի մը զուռուշ։ «Չէ, կը պատասխանէ Քափամաճի Նանին, հիմայ կուղեմքու հօրդ նամակ մը գրես, որ հոս 1.000 (Օսմանեան 100 նոյն ոսկի խրկէ)։» Կըլլայ չըլլար ըսելով՝ վերջապէս 70.000 զուռուշ գին կը կարեն, և Նիգիլացիներէն մեկուն ձեռք կէս օրուան ժամանակ գիրը իզմիր կը խրկեն։ Ինչո՛ւ անգիլացի ան տաք արեւուն կուգայ իզմիր ու յոյն վաճառականին հօրը կը յանձնէ տղուն գրած նամակը. կ'առնէ 70.000 զուռուշը բոլորը ոսկի որովհետեւ գողերը ապսպրած էին որ ձեռմանը տակ չեն ընդունիր, կը տանի կը վճարէ Վաղակապետին, որ ան ատենը ապստուծութիւն կուտայ յոյն վաճառականին և մէկ Նիգիլացւոյն զորոնք լեռան գըրկի մը տարած էր ըստակին գալուն սպասելով։ Վաղակապետը սպասողներ էր Նիգիլացւոյն (որ ստակին համար իզմիր զրկուած էր) թէ 70.000 ը չըրերէ՛ն նէ իւր եղբայրը և յոյն պիտի մեռայրնէ և այլն և այլն։»

— Պերճիքայի տեղութեան երկաթուղին երուն արգիւնքը մայիս ամսոյ մէջ 2,418,283 ֆրանք և այս տարուան առաջին հինգ ամիսներուն 6,361,839 ֆրանք եղեր է։

— Սոսնիկան. Վարդիոյ բնաբանին մէկը՝ փորձով մը աւելի հաստատեց երկրիս օրական թաւալումը արեւմուտքէ յարկելը։ Քսան ոտնաչափ երկայնութեամբ թելով մը գնտակ մը կախեց. ու այս գնտակը շարժեց բեւեռէ ի բեւեռ, քիչ ժամանակէն ետքը տեսնուեցաւ, որ շարժումը փոխուելով սկըսու գնտակը ծածալ արեւմուտքէն դէպ ի աւրեւելք։ Այսին յայտնի ապացոյց մը կըլլայ երկրիս կեդրոնական շարժմանը ու թաւալմանը՝ արեւմուտքէ յարկելը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

— Պաշտօնաւ ընտանիքի անունով քաճիկէն վերաւաւ և հայերէն քաճիկով գիրք մը պարտեցաւ, շաք զոտարձակ և զօտեցոյցիւ. (Գրապի Հիշեալէսի ըստաճին ոճը ունի, և նոյն հեղինակին աշխատութիւնը կը խորհուրէ, բայց Պաշտօնաւ ընտանիքի (պարտաւորութիւն) ծիծաղաշարժ պարբերներով զարդարուած է։ Այս գիրքը ամեն գրաւաճառներուն խանութը կը վաճառուի։

ՏԵՒԱՐԳ ԼՐԱԳՐՈՅՍ

ԳՐԻԳՈՐ ՄԱՐԿՈՍԵԱՆ = ՄԱՅԱՍԱՍ ԱՊՐՈԵԱՆ
Լիւթարձի թարգմանական Բարձրագոյն Իրան։

Կ. ՊՈԼԻՍ Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՕՀԱՆՆՈՒ ՄԻԿՅԷՆՏԵՍԵԱՆ